

Յարութիւնին, որ թիֆլիս 1791 յունվարի 12 վախճանեցաւ, եւ յետ սուրբ պատարագին հասարակութեամբ պաշտօն կատարէք⁴»:

Այս նամակին պատասխանում են Ն. Զուլայի Ամենաիրկիչ վանքի հոգարարձուծիւնն եւ երկու վարդապետներ 1795 թ. օգոստոս 20ին: Յայտնելով իրենց ցաւակցութիւնը աղա Յովհաննէսի որդու վաղահաս մահուան առթիւ, գրում են, որ բոլոր եկեղեցիներում անմիջապէս կատարուել է Ս. Պատարագ եւ անպահ հոգեհանդիստ: Ի վերջոյ յոյս են յայտնում, որ նա օգնութեան կը դայ Ամենաիրկիչ վանքին:

Իրօք զարմանալի մարդ է եղել աղա Յովհաննէս Լազարեանցը իր բազմակողմանի հետաքրքրութեամբ, չնայած իր բազում զբաղմունքներին, որոնք կապուած էին նրա բարձր դիրքի եւ պաշտօնների հետ: Նոյն նամակում նա հարցնում է.

«...1743ումն ես Զուլուց վերկարման՝ Տէր Գէորգ քահանայ կայր միականի. կենդանի է այժմ թէ վախճանեալ է, եւ զաւակ է մնացեալ աշխարհական են թէ Գահանայ են՝ խնդրեմ մեզ ծանուցանել»:

Նոր Զուլայի պատմիչը հաղորդում է նաեւ մի ուրիշ փաստ: Սուբելով Ն. Զուլայի Սուրբ Կատարինէ Անապատ Կուսանոցի մասին, գրում է.

«Ըստ արձանագրութեանն եղելոյ ի սմին Կուսաստանի, շինեցաւ այս Անապատ ի թուականին Հայոց Ռ-ՀԲ (1623), արդեամբ եւ ծախիւք բարեպաշտօն Սոջայ Եղիազարու, որ էր պապ իշխանապետին Եղիազարու Նահապետին տոհմի վեհապետայ Լազարեանց»:

Ծանօթութիւնից էլ իմանում ենք, որ կուսանոցում պահուած է «Գալարածոյ թուղթ» արձանագրութեամբ Անապատի կառուցման մասին, եւ որ այդ թղթի մէջ ասուած է, ի միջի այլոց, որ՝

«Չարդարեալ է ջահիւք եւ լապտերօք արար տեղի պատարագի եւ փառարանութեան անմահ թագաւորին Քրիստոսի...»⁵»:

Ու նաեւ՝

«...Լինելն օոյն խօջայ Եղիազարու պապ իշխանապետին Եղիազարու աստի լինի յայտ, զի ի նմին արձանագրութեան յետ եկեղեցւոյ շինութեանն յայտնելոյ՝ յիշատակի «Աստուած օրհնէ նախ զխօջայ Եղիազարն որ շինեաց զեկեղեցին իրցերով եւ տնտես տներովն եւ ես

⁴ Ibid. էջ 108—109:
⁵ Ibid. Հ. II, էջ 236:

եկեղեցւոյն մէկ խաչ, մէկ Աւետարան, մէկ այսմաւուրք, մէկ սկիհ, մէկ շուրջառ, մէկ սաղաւարդ, մէկ աւագանի ծածկոց, երկու մոմղան, մէկ սկոհ աղլուխ⁶»:

Ն. Զուլայի յիշեալ պատմիչը այնուհետեւ առաջ է բերում Ն. Զուլայի եկեղեցիներում պահպանուած «Յիշատակարան»ներից հետեւեալ տեղեկութիւնները Լազարեանների կողմից արուած նուիրատուութիւնների մասին.

ա. Սուրբ Լուսաւորչի կամ Սուրբ Միգասայ եկեղեցւոյ Յիշատակարանում ասուած է.

«Աստուած օրհնէ զխօջայ Մանուկն՝ զկողակից Մարիամն եւ զորդին Եղիազարն, որ ետուն ի դուռն սուրբ եկեղեցւոյն (թաղին Դաւրիթեցոց) մէկ կոստողած ոսկետուփ մազաղաթ Աւետարան, Ա. առննի սաղմոսարան, Ա. ժամագիրք, Ա. տօնացոյց, Ա. աւագանի վարադոյր իւր շամիրովն, մէկ մեծ մոմղան, մէկ զալամքար վարադոյր, Ա. շուրջառ, եւ զխորանն մեծացոյց եւ բարձրացոյց եւ նորոգեաց յիշատակ իւրն եւ իւր ծնողացն Լազարին եւ Սաթէին յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք»:

բ. Սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ Յիշատակարանում ասուած է.

«Աստուած օրհնէ Պարոն Աղազարն կողակիցն Բազրին եւ զՎարդենին, եւ զորդին Մանուկն եւ զՍաֆարն, որ ետ եկեղեցւոյն (սուրբ Լուսաւորչի) Ա. մեծ դիւանի խալի, Ա. բանաֆլ ատլաս նաշի (զազաղի) ծածկոց, Բ. պղնձէ պատկեր, Ա. չէթ սուղանի»:

գ. Յիշատակագիր ի կուսանաց Անապատի.

«Աստուած օրհնէ զՍոջայ Եղիազարն... եւ զիւր որդի Նազարէթն անպորձ պահէ»:

դ. Արձանագիր ի սուրբ Լուսաւորչի (սուրբ Միգաս) եկեղեցւոյ.

«Յիշեցէք ի Քրիստոս զՍոջայ Աղազարն եւ զԾնողոսն Մանուկն եւ զՄարիամն եւ հանգուցեալ որդին Վալիդէն, եւ նորարողը Մանուկն եւ զկենակից Բատունն որ ետուն զսուրբ Կաթողիկէն ծածկել, յիշեցէք առ Աստուած»:

ե. Յիշատակագիր սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ.

«Աստուած օրհնէ զՊարոն Աղազարն եւ իւր կողակիցն Բազրին եւ որդիքն Աղայ Մանուկն, Աղայ Սաֆարն որ ետուն յիշատակ

⁶ Ibid. Հ. II, էջ 236:

սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյն Ա. զառ թիրվանդեայ շուրջառ, Ա. սաղաւարդ իւր խաչովն, Ա. քաշած զառ ուրար, Ա. ջուղտ զառ բազրանդ (թեւոց), Ա. շապիկ, Ա. սկհւոյ զառ աղլուխ, սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյ միջի մահաջարն քաշեց, վերնատունն շինեց...»:

*

Վերոյիշեալ տեղեկութիւնները այնքան խօսուն են ու այնքան ցայտուն ապացոյցներ Լազարեան տոհմի բոլոր անդամների առաքինութեանց, սկսած իրենց նախահայրերից մինչեւ տոհմի վերջին շառաւիղը՝ Մանուկն Յովհաննէս Սաջատրեան Լազարեանը, որ որ եւ է մեկնարանութեանց ու լուսարանութեանց կարիքը չկայ:

Եթէ մեր այսօրուայ բազմաթիւ հայ հարուստները, միլիոնատէրերը, սկսած Կալիֆօրնիայի 15 հայ միլիոնատէրերից մինչեւ Լոնդոն-Փարիզում բազմած նաւթի թագաւոր Կիւլպէնկեանը հետեւէին Լազարեանների օրինակին, հայ գաղթաշխարհում մենք չէինք ունենայ կարիքաւորներ եւ հայ գաղթաշխարհը սփռուած կը լինէր զարոցներով. զբաղարաններով, հիւանդանոցներով, մեր զբաղանութիւնը ու գրագէտները չէին զանուի այն ողորմելի վիճակում, որի մէջ այսօր նրանք հոգեպէս եւ բարոյապէս տառապում են...:

(Շարունակելի:)

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՀՅՑ ՄՅԵԿՈՒԹԵՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն:)

ԲԵՐԱ

1. ՀԱՄԱԶԳԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1846)

1846 Մարտ 17ին Բերայի մէջ գումարած իր առաջին ժողովքին առթիւ Համազգեաց Ընկերութիւնը 76 ստորագրութեամբ զբարար յայտարարութիւն մը հրատարակելով՝ կ'ըսէ. «Մեծաց արդարեւ զովութեանց է արժանաւոր եւ առիթ անչափ խնդութեան, տեսանել արժարձեալ ի սակաւ յայտուիկ ամս ի սիրտ ամենայն ազգայնոց մերոց, փոյթ իմն եռանդեան ի կանգնումն ուսումնարանաց, եւ

ի զարգացումն ուսումնական ընկերութեանց... ազգ մեր նախնազոյն յազգս, իբր անյիշատակ թաղեալ երբեմն ի տգիտութեան խորս... արդ զգլուխ ի վեր ամբարձեալ յաւերակաց շիրմացն, թախիժ մեզ արկանէ որդւոց իւրոց, մի՛ զանց առնել զիւրիք ի կենդանացուցանել զնա յիմաստութիւն... Մի ազգ եմք եւ ի մի միաբանութիւն ժողովեալ, երթիցուք ուր ձգիցէ զմեզ ճշմարիտ ազգասիրութիւն»:

Այս յառաջարանէն վերջ՝ Ընկերութեան հիմնադիրները կը ներկայացնեն 10 կէտեր, որոնք իրենց գործունէութեան ապագայ ասպարէզը պիտի կազմեն: Այդ կէտերն են.

Ա. Միասիրտ, միակամ, խաղաղասէր շողկապումն անձանց ի մի միաբանութիւն:

Բ. Յօրինուած եւ թարգմանութիւն գրեանց օգտակարաց, եւ հրատարակումն այնոցիկ ապագրութեամբ:

Գ. Կանգնումն վարժարանաց եւ դպրոցաց ի քաղաքս եւ ի դիւրս՝ ի դաստիարակութիւն ուստերաց եւ դատերաց:

Դ. Հմտութիւն եւ գործադրութիւն արուեստին երկրագործութեան:

Ե. Հետախոյզ ջննութիւն հայրենականացն նուութեանց եւ սովորութեանց:

Զ. Հաւաքումն մատենից նախնեաց եւ գրաւոց եւ այլոց նշխարաց հնութեանց:

Է. Հաւաքումն նիւթոց քնական պատմութեան կենդանեաց, բուսականաց եւ ընդերկրեայց:

Ը. Ուսումն ամենազգի արուեստից ծաղկելոցն ազանց:

Թ. Բարգաւաճումն վաճառականութեան ըստ եւրոպական օրինի:

Ժ. Ուսումն անթերի դիտութեան վաստակելոյ ի մետաղս²»:

Ընկերութիւնը իր անմիջական գործունէութեան նպատակ կ'ընտրէ սակայն հետեւեալները. 1. Թարգմանել կամ շարադրել կարեւոր հաստատմանը՝ մտքի զարգացումի համար. 2. ջանք ընել՝ հաստատուն վաճառականութեան մը հիմ դնելու. 3. պատրաստութիւն տեսնել՝ մանչերու եւ աղջիկներու վարժարաններ հիմնելու համար³:

Ընկերութեան առաջին գործը կ'ըլլայ կազմել իր յատուկ կանոնագիրը: Այս կարեւոր գործը, ընկերութեան խնդրանքով,

¹ Արշ. Արարատեան, 1846, Թ. 257:
² Անդ:
³ Անդ:

գլուխ կը հանէ Վենետիկի Միթրաբաններէն շ. Պետրոս Մինասեան, ինչպէս կը պատմէ ժամանակակից անձ մը⁴:

Պէրպէրեան եւս կու տայ կարեւոր լուսարանութիւն Ընկերութեան մասին՝ գրելով. «... ազգասէր եւ ուսումնասէր անձինք ի Հոռոմէական Հայոց՝ յորոց բազումք աչակերտեալք էին ի Մուրատեան եւ ի Ռափայէլեան վարժարանն եւ ի Վանսն Վէնէտկոյ եւ Վէննայու, համամիտ եւ համակամ խորհրդով եւ հաւանութեամբ կամեցան հաստատել զԸնկերութիւն ինն ընդ Լուսաւորչեան Հայոց: Նպատակ Ընկերութեան էր ազգասիրութիւն եւ յառաջադիմութիւն ի բարոյական մասին, եւ բաց է բաց հերքումն տարապարտ վիճից... բացցեն նոքօք դպրոցս ի հայարնակ քաղաքս Ասիոյ, յորս ոչ գոյ դպրոց, ոչ ընթերցանութիւն եւ ոչ ուսումն գանազան արուեստից...: Զկանոնս Ընկերութեանն խմբագրեաց շ. Պետրոս Վ. միաբան Վէնէտկեան վանից եւ գանուն նորա կոչեաց Համազգեաց Ընկերութիւն⁵»:

Ընկերութեանն ոգին ու «գլխաւոր միաբանասէրք»ը եղած են. Մկրտիչ Մամանձեան, Յակոբ Տաւուտեան (յետոյ՝ Դոկտոր), Ա. Լուսթեան, Սաշատուր Գազազեան, Յովսէփ Վարդանեան (յետոյ՝ Փաշա), Կարապետ Թիւրպէնտեան, Սարգիս Ասկերեան եւ Սերովբէ Ազնաւուրեան⁶: Ընկերութեան Գարտուղարը եղած է Մկրտիչ Պէշիկթաշեան⁷:

Իբրեւ Համազգային Ընկերութիւն՝ ստէն հայ կրնար անդամ գրուել՝ մուտքի համար 10 եւ ամսական 5 դահեկան վճարելով: Իզմիրի Թերթը գովելով Հայ Կաթողիկէ երկտասարդներու ազգասիրական այս շարժումը՝ խրատական սատողերը կը գրէ. «Անշուշտ իւրաքանչիւր հայրենասէր անձն յաջողութիւն եւ յառաջադիմութիւն պիտի բարեմաղթէ եւ նպատամատոյց ըլլայ ըստ կարի Համազգեաց Ընկերութեանը եթէ, ինչպէս որ կը խոստանայ՝ ազգասիրութիւնը եւ ընկերութիւնը միմիայն առաջնորդ ունենայ միշտ իր ամէն ընթացիցը⁸»:

Հակառակ անոր որ Ընկերութիւնը իր որորոցէն սկսած կ'ունենայ գանազան խոչըն-

դոտներ, թիւրիմացութիւններ ու նոյն իսկ ոտխներ՝ կարճ ժամանակի մէջ մեծապէս կը տարածուի: Կը գտնէ անթիւ համակիրներ ու սատարողներ: 1848 Փետրուարին իր անդամներու թիւը 600էն աւելի էր⁹: Տէր էր սեփական տան մը Բերա, Լալէ փողոց թ. 13¹⁰:

Բայց արդէն 1848ի վերջերը Ընկերութիւնը կը բախի լուրջ արգելքներու: Հայութիւնը տակաւին հասունցած չէր ըմբռնել կարենալու համար թէ կրօնական տարբերութիւնը իսկական արգելք մը չէր որ միեւնոյն ցեղին ու հայրենիքին զաւակները հասարակաց օգտին ու շահուն համար միացնեն իրենց ուժերը եւ ձգտին հասարակաց վախճանի մը: Ասով միասին թղթակից մը կը պատմէ որ, երբ Համազգեացի կաթողիկէ անդամները կը ստիպուին որ իրենց մէջէն ոչ-կաթողիկէները հեռացնեն՝ կաթողիկէները կը պատասխանեն թէ «մենք միեւնոյն Հայոց ազգն ենք, եւ կրօնի տարբերութիւնը... չկրնար ազդերնիս երկուքի բաժնել¹¹»:

Վէճը կ'երկարի սակայն, հասնելով մինչեւ Հոռոմ եւ Բ. Դուռը: Ու Ընկերութիւնը կը ստիպուի փոխել իր կանոնադրութեան շատ մը կէտերը: Փոփոխուած կանոնները, կազմուած 41 Յօդուածներէ, կը հրատարակուին 1851ին¹²: Բայց փոփոխութիւնները օգուտ մը չեն ընէր՝ փրկելու համար Ընկերութեան գոյութիւնը: Ու ան կը դադրի պահ մը գոյութիւն ունենալէ: 1852 Սեպտեմբերին Մասիս¹³ կը գրէ թէ «կը լսենք նաեւ որ Համազգեաց Ընկերութիւնն ալ խափաներ է»:

Սակայն յանթեղի կը մնար տենչը վերականգնելու Ընկերութիւնը իր նախնական վիճակին մէջ՝ իբրեւ իսկական Համազգային Ընկերութիւն մը: Մասիս¹⁴ 1860ի վերջը կը գրէ որ «Հին Համազգեաց Ընկերութեան արգոյ անդամները գովելի խորհրդով ազգային մատենադարան կամ ընթերցարան մը բանուլու ձեռք գարկեր են... տեղին է Պէյօղլու Սաբըր-Ալաճ թաղը Լալէ սօգազ թ. 13, Համազգեաց Ընկերութեան քարաչէն տունը»:

1861ի սկիզբը փորձ մը կ'ըլլայ Ընկերութիւնը վերարձարձելու: Կը վերաքննուին ա-

⁴ Յ. Ասկերեան, Հասունեան քաղաքականութիւն, Տիգրիս 1868, էջ 77:
⁵ Ա. Պէրպէրեան, Պատմութիւն, էջ 350—351:
⁶ Անդ՝ էջ 358:
⁷ Վահան Զարգարեան, Յիշատակարան, Գ., էջ 133:
⁸ Արշ. Արարատ, անդ՝ թ. 257:

⁹ Անդ՝ թ. 304:
¹⁰ Արեւիկ, 1898, թ. 3853:
¹¹ Արշ. Արարատ, 1848, թ. 310:
¹² Տե՛ս Զատագովութիւն Համազգեաց Ընկերութեան, Կ. Պ. 1851, էջ 34—42: — Հմտ. Պէրպէրեան, անդ՝ էջ 351—358:
¹³ թ. 33:
¹⁴ թ. 464:

նոր կանոնները¹⁵ եւ 1861 Ապրիլ 21ին դումարուած ընդհանուր ժողովը կը հրատարակէ նոր կանոնները, որոնք 24 Յօդուածէ բաղկացած են եւ որոնց երկրորդը կ'ըսէ. «Առանց կրօնի եւ վիճակի խտրութեան ամէն Հայազգի պիտի կարենայ այս Ընկերութեան բաժանորդ ըլլալ եւ յամենայնի հաւասար իրաւունք ունենալ¹⁶»: Այս կանոնները երեք տարի անփոփոխելի էին: Ընկերութեան անդամ կրնային ըլլալ նաեւ տիկիներ՝ առանց ժողովներու մասնակից ըլլալու իրաւունքի (Կանոն 6): Ընկերութեան կենդրոնն էր դարձեալ Բերա, Լալէ փողոց թ. 13:

Կրցա՞ւ Ընկերութիւնը այս իր նոր ձեւին մէջ սոսկալ երկար ատեն: Բնականաբար ոչ: Ընկերութիւնը այս ձեւով ալ հանդուրժուած չէր ու կաղնիկալ ընթացքէ մը վերջ՝ դադարած է: 1870ին փափաք կը յայտնուի անդամ մըն ալ վերակենդանացնելու գոյն, զի անոր «յիշատակը տակաւին Հայ սրտերը կը բարբախէ¹⁷»:

Օրագրի համեմատ¹⁸ «քաղաքային մատնութեամբ ցրուած» է Ընկերութիւնը:

Ընկերութիւնը, իբրեւ այսպիսի, դադարելէ յետոյ՝ երկար ատեն պահած է իր դոյութիւնը ուրիշ ձեւի տակ: Ան բացած է իր կենդրոնին մէջ — Բերա — հայ աղջկանց իր կենդրան մը, զոր վարած է Տիկնանց «Յափարտարան մը, զոր վարած է Տիկնանց» միջոցաւ¹⁹:

«Համազգեաց» վերնադրով ընդարձակ յօդուած մ'ունի Ռուբէն Որբերեան «Համազգային Տարեգիրք»ի մէջ²⁰, ուր մանրամասնօրէն խօսուած է նիւթի մասին:

2. ՆԱՐԵԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1846)

1846 Մայիս 1ին հաստատուած է Նարեկեան Ընկերութիւնը, որուն անդամնիկ յայտարարութիւնը կ'ըսէ. «Պէյօղլուի Հայկական դպրատունները, բարձր սրբազան, ամենապատիւ Տ. Մատթէոս ազգասէր եւ ուսումնասէր Պատրիարքին յորդորանօքը՝ տեղացիք ազգասիրական ոգւով եւ իրենց ուրիշ տեղի ազգակիցներուն նմանելու փափաքով նոր Ընկերութիւն մը հաստատեցին 1846 Մայիս 1էն՝ բարեյարմար պայմաններով կ'որ-

¹⁵ Մասիս, 1861, թ. 476:
¹⁶ Մէքմ. Հավասիս, 1861, թ. 403:
¹⁷ Մամուլ, Կ. Պ. 1870, էջ 462:
¹⁸ Կ. Պ. 1874, թ. 1389:
¹⁹ Տե՛ս Մասիս, 1881, թ. 3068 եւ 1882, թ. 3267:
²⁰ Գահերէ, 1936, էջ 216—226:

գաւորուած, եւ երանելի Ս. Գրիգոր Նարեկացոյն օժանդակութեանը նուիրելով անունը դրուեցաւ Նարեկեան Ընկերութիւն: Ընկերութեան յատուկ պաշտպան Սրբազան Պատրիարքն է, եւ ընտրեալ հոգաբարձուներուն ամէնն ալ նորին Սրբազանութիւնը կը հաստատէ²¹»:

«Բարեյարմար պայմաններով կարգաւորուած» բացատրութիւնը կը յայտնէ թէ Ընկերութիւնը ունեցած է որոշ կանոնադրութիւն մը, որ մեզի անծանօթ է:

Ընկերութեան ամսական անդամավճարն է 5 դրուշ: Անդամավճարի ընկալագիրը կը ներկայացնէ Ս. Գրիգոր Նարեկացին՝ շրջանակի մը մէջ, ծնրադիր, բազկատարած: Շրջանակին վերը գրուած է «Նարեկեան Ընկերութիւն Հայոց», իսկ վարը «Ի Պէյօղլու 1846 Մայիս 1»: Ընկալագրիս նմանահամութիւնը տուած է Դոկտ. Վահրամ Թորգոմեան²²:

Ընկերութեանն ջանքերով կը կառուցուի Բերայի մէջ Նարեկեան վարժարանը, որ երկար կեանք ունեցած է, իսկ Ընկերութիւնը, որ վարժարանին պաշտպանն է՝ կարճատեւ կեանք մ'ունեցած է, թէ՛ս իր անունը կրած է վարժարաններու հոգաբարձութիւնը՝ մինչեւ 1861²³:

Ընկերութեանն աւաջին անդամներէն մին եւ Նարեկեան վարժարանի հոգաբարձու եղած է Դոկտ. Ստեփան Փաշա Ասլանեան²⁴, որուն ջանքերով թոյլցած Ընկերութիւնը 1849ին վերակազմուած է²⁵:

3. ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1846)

Ինչպէս ծանօթ է՝ թրքահայոց մէջ թատերական խողերու սկզբնաւորութիւնը արդէն ժ. դարու առաջին քառորդին եղած էր: 1840ական թուականներուն Պոլսոյ գանազան թաղային դպրոցներու եւ առանձնական տներու մէջ փոքրիկ ներկայացումներ տեղի կ'ունենային:

1846ին թատերական խողերու միջկատակի յատուկ տեսարաններ ներկայացնող Ընկերութիւն մը կը կազմէ Յովհաննէս Գաս-

²¹ Հայաստան, 1846, թ. 8: — Հմտ. Մասիս, 1853, թ. 57:
²² Համդէս Ամսօրեայ, 1905, էջ 78:
²³ Մարտիրոս Հանէսեան, Հարիւր քսանեւհինգամեայ Յորեկան Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցւոյ, Կ. Պ. 1932, էջ 59—60:
²⁴ Հ. Ա., անդ՝ էջ 78—79:
²⁵ Հ. Մ. Պատուրեան, Հանրադիտակ, էջ 227:

պարեան († 1867): Ընկերութեան անունը աւանդած չեն ժամանակակից թերթերէն Հայաստան եւ Ազգասէր, որոնք կը խօսին Գասպարեանի ներկայացումներու մասին: Այսպէս յիշատակուած 26, մեղի անձանց ազդեցութիւնը, Արամեան Ընկերութիւնը կը կոչէ զայն:

Հայաստան 27 1847 Յունիս 6ին կը գրէ Ընկերութեան մասին. «Պ. Յովհաննէս Գասպարեան հանձարեղ եւ միանգամայն ճարտար երիտասարդը, որ տարիէ մը ի վեր Հայազգի երիտասարդներէն Ընկերութիւն մը կազմելով Պէյօղլուի ձմեռանոցի դիմացը անփութադրօյի մը մէջ կերպ կերպ ուժի եւ ճարտարութեան վերաբերեալ սքանչելի խաղերէն ետքը մնջկատակ կոչուած զուարճալի խաղերէն ալ խաղցրներով անմեղ ժամանակ անցունել կու տար իւր բազմաթիւ հանդիսականներուն, այս տարի իւր հանդիսականները առաւել գոհ ընելու մտօք ուրիշ նոր նոր խաղեր ալ խաղցունելու սկսեց. նաեւ սուրբ Գրոց պատմութեան երեւելի դիպուածներուն տեսարաններն ալ աչքի առջեւ կը բերէ կոր, որոնց մէկ քանին անցեալ կիւրակէ անանկ բնականի պէս ցցուց որ բոլոր հանդիսականք ապշեցան մնացին»:

Կարկաթայի Ազգասէրը 28 օտար թերթերէ աննելով կու տայ մանրամասնութիւններ Գասպարեանի ներկայացումներու մասին, որոնց ներկայ կ'ըլլար, կ'ըսէ, նոյն իսկ Սուլթանի թագաւորամայր կայսրուհին, «որ եւ պաշտպանուէի թատերականաց սյուցիկ»:

Յովհ. Գասպարեանի գործակիցներն եղած են. Միքայէլ Բամպուքճեան, Մելքոն Գասպարեան, Ալիքան Սվաճեան, Յակոբ Սվաճեան, Մարտիրոս Սանճեան, Գէորգ Զիլինկիրեան, Սերովբէ Պէրպլեբեան, Ազատի Մինասեան, Յարութիւն Պաղտատեան, Կարապետ Տէօքմէճեան եւ Հաճի Սահակ: Այս խումբը Պոլսոյ մէջ երկար առէն մեծ ընդունելութիւն գտնելէ վերջ՝ մեկնած է Կովկաս (1849) 29: Որքան կ'երեւայ՝ անկէ ուրիշ երկիրներ ալ անցնելով՝ շրջան մ'ըրած է Գասպարեան: 1863 Փետրուարին սկիզբը ծանուցում մը կ'իմացնէ որ Յովհ. Գասպարեան Իտալիոյ մէջ նոր Ընկերութիւն մը կազմելով վերադարձած է Պոլիս եւ միտք ունի Կէտիկ Փաշայի մէջ «մինչեւ հիմա չտեսնուած ճար-

26 Գաղութահայ Տարեգրք, Ա., էջ 55:
27 Թ. 50:
28 1847, Թ. 118:
29 Գաղութահայ Տարեգրք, անդ:

տարահնար եւ զբօսեցուցիչ խաղեր ներկայացնելու... եւ տարակոյս չունի որ մեծապէս գոհ պիտի ըլլան» 30:

1867ին, Գասպարեանի մահէն վերջ, իւր Բերայի լարախաղատան մէջ կը շարունակուին զանազան խաղերու ներկայացումները, որոնց մուտքը 5 եւ 10 դրուշ կ'արժէր 31:

4. ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1856)

Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի ի նպաստ հիմնուած է Բարեսիրական Ընկերութիւնը, որ կարճատեւ կեանք մ'ունեցած է 32: Հիւանդանոցի Պատմութեան հեղինակին 33 անձանցով է Ընկերութիւնս: Ժամանակակից Հայ թերթը 34 կը տեղեկագրէ. «Յայտնի է որ սուրբ Փրկչի ազգ. հիւանդանոցին ծախքը խիստ ծանր ըլլալով, մանաւանդ ժամանակէ մը ի վեր ուտելիաց սղութեան պատճառաւ եւս առաւել ծանրանալով, ազգային առատաձեռնութեան հաւաքոված տուրքերն ու կամաւոր նուէրները դժուարաւ կը բաւէին հիւանդանոցին մէջ խնամեալ 350ի չափ կարօտելոց պիտոյքը եւ գլխաւորապէս ուտելիքը առատապէս հոգալու. այս պատճառաւ օրը մէկ անգամ միայն տաք կերակուր կը տրվէր իրերկունները...: Այս անբաւական վիճակը քանի մը ազգատասէր բարեպաշտ անձանց սիրտը շարժելով, խորհեցան բաժանորդական Ընկերութիւն մը կազմել եւ հիւանդանոցին մատակարարութեան պակասը լեցնել...: Այս աստուածահաճոյ խորհրդոյն կատարմանը համար առ այժմ հարիւրէն աւելի անձինք յօժարակամ իրենց ստորագրութիւնը տուած ըլլալով, կը յուսացվի որ բաժանորդաց թիւը պէտք եղած օգնութեան բաւական ըլլալու կէտին կը հասնի, որ է 400 բաժին, ամէն մէկը 100 դրուշի: Ահաւասիկ այս Բարեսիրական Ընկերութեան ներկայ բաժանորդները»: Մասիս կու տայ հոգ եւ յաջորդ թիւերուն մէջ անունները Ընկերութեան բաժանորդներուն, որոնց մէջ են օրուան Պատրիարքը եւ Հայ մեծամեծներ, բաժիններու գումարը հասցնելով 336ի:

30 Մասիս, 1863, Թ. 573:
31 Մասիս, Փոքր, Կ. Պ. 1867, Թ. 30:
32 Թորոքմեան, անդ՝ Բ., էջ 590: — Գաղութ. Տարեգր., Ա., անդ՝ էջ 60:
33 Բիւզանդ. Քէչեան, Պատմ. Ս. Փրկչի Հիւանդանոցի, Կ. Պ. 1888:
34 Մասիս, 1856, Թ. 225:

5. ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1857)

Սրապիոն Հէքիմեանի ձեռքին տակ Բերայի մէջ կազմակերպուած ու մարզուած առաջին դերասանական խումբը եղած է նաեւ թատերական Ընկերութիւն մը, որ կոչուած է Դերասանական Ընկերութիւն: Ընկերութեան կազմութիւնը տեղի ունեցած կ'երեւայ 1857ին. 1858 Ապրիլ 28ին Ընկերութեան կողմէ թողմա Թ. Յարութիւնեան ծանուցում մը տալով՝ կ'իմացնէ թէ Ընկերութեան խումբը մօտ առենէն ներկայացում պիտի տայ: Պատմական եւ շատ հետաքրքրական է այդ ծանուցումը, ուր ներկայացած կը գտնենք Հայ ազգային թատրոնի անդրանիկ դերասանական խումբերէն մին՝ հաւանօրէն իր ամբողջական կազմովը: Ահա այդ ծանուցումը.

«Ծանուցումնք

1858 Ապրիլ 28

Մեծարգոյ խմբագիր. Պէյօղլուի մէջ հաստատուած ու Սրապիոն ազգ Հէքիմեանէն վարժուած Դերասանական Ընկերութիւնը չորս հինգ օրէն Մ. Միշէլ եւ եղբարք Նաումի թատրոնը իր պատրաստած Միւրայի Փէյլէսօֆ իլէ միւսէյեպ քարտաշար» ըսված զուարճալի խաղը պիտի ներկայացընէ: Ընկերութիւնը Մ. Նաումի եւ Սրապիոն ազգ Հէքիմեանին հսկողութեանը տակ ըլլալով՝ քիչ առենէն առաջ երթալուն տարակոյս չկայ. այս խաղին ներկայանալու անձինքն են.

- Պ. Ս. Է.
- Պ. Յովհ. Աճէմեան.
- Պ. Գարեգին.
- Պ. Գարրիէլ Պալատլեան.
- Պ. Թովմաս Թ. Յարութիւնեան.
- Ազաւնի Տանիմարքա Գէորգեան.
- Փաննի:

Պաղը ներկայանալու դիշերը օր մը առաջ ուրիշ ծանուցումով խմաց պիտի տրվի:

Մնամ եւ այլն.

Թովմայ Թ. Յարութիւնեան 35»:

Մասիս 36 նոյն Ընկերութեան Բերայի մէջ տուած թրքերէն ներկայացումին վրայ խօսելով՝ կ'ըսէ. «Հայազգի դերասանները՝ որ

35 Մասիս, Թ. 327:
36 Անդ՝ Թ. 353:

միայն տարիէ մը ի վեր այս դժուար եւ փափուկ արհեստը սկսած են, արդարեւ զարմանալի ճարտարութիւն ցոյց տուին իրենց ձեւացմունքներուն մէջ»:

1860ին սկիզբը արդէն բազմացած էին Հայոց մէջ թատերական Ընկերութիւնները: «... գրեթէ ամէն կողմէն թատերական կամ դերասանական նորանոր Ընկերութեանց կազմուելուն արձագանգը պահանջուա կը հնչէ», կը գրէ ժամանակակից մը 37:

6. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՒ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1859)

1859 Յունուար 7ին հիմնուած է Մուրատեան եւ Ռափայէլեան Աշակերտաց Ընկերութիւնը 38: Հիմնողներն են երկու վարժարաններու նախկին աշակերտները: Այդ հիմնարկութեան առաջին տարեդարձին առթիւ Ընկերութիւնը 1860 Յունուար 7ին Բերայի Մ. Նորորդութեան եկեղեցոյ մէջ հանդիսական պատարագ մատուցանել կու տայ երկու Բարեպարներու եւ անոնց համօրէն ննջեցելոց հոգիներուն համար: Պատարագէն է Հայոց Պատրիարքը՝ Նոյն օրը իրիկուան դէմ, Բերայի մէկ ընդարձակ սրահին մէջ, զարդարուած Մուրատի եւ Ռափայէլի մեծադիր նկարներով՝ կը խմբուի Ընկերութեան տարեդարձի հանդէսը: Կը նախագահէ Մկրտիչ Պէշիկթաշեան: Տեղի կ'ունենան նուազ, ճառախօսութիւն եւ գինեձօն:

Մէճմ. Հալատիսի տաղանդաւոր խմբագիրը, Յովսէփ Վարդանեան, նկարագրած է այդ տարեդարձի գեղեցիկ հանդէսը տալով նաեւ հանդիսաւոր օրուան ձօնուած Սրապիոն Հէքիմեանի «երգ բաժակին», Պէշիկթաշեանի ճառը եւ մասեր միւս ճառերէն: Վարդանեան իր նկարագրականին մէջ կը գրէ. «Յիրաւի ազգերնիս գուրկ է քաղաքական կենդանութեան. խոնարհինք աստուածային կամացը առջեւ: Բայց Յունուարի եօթներորդ օրը մեզի ցուցուց որ ունինք բարոյական կեանք մը, առաւել տեւական եւ առաւել ազնիւ. չունինք առիթներ յաղթական կամարներ ու արձաններ կանգնելու մեր դիւցազանց. բաժին է ասիկա քաղաքական կենդանութիւն վայելող ազգաց. բայց ունինք դիւցազնական առաքինութեամբ պերճացեալ անձինք եւ ասոնց արդեամբը պսակեալ կենդանի

37 Մասիս, 1860, Թ. 423:
38 Մէճմ. Հալատիս, 1860, Թ. 330:

յիշատակներ, կենդանի այսօր եւ կենդանի յաջորդութեամբ մինչեւ յաւիտեան: Ասոնք պղինձ չեն եւ ոչ մարմարին, այլ իմացականութիւն. իմացականութիւն՝ հոգի աշխարհի, անմահ իրրեւ հոգի եւ ոչ ապականացու իրրեւ նիւթ. յիշատակ՝ զոր ոչ աշխարհակալը կը կործանէ եւ ոչ թշնամին կը փշրէ»³⁹:

Մուրաւ-Ռաֆայէլեան Ընկերութեան հաւաքատեղին է Բերա, Համազգեաց Ընկերութեան սրահը: Տնօրէն Ժողովքի Ատենապետն է Մ. Պէշիկթաշլեան, իսկ Ատենապետը՝ Թովմաս Թերզեան⁴⁰: Ընկերութեան կանոնագիրը անձանօթ է մեզ: Անոր նպատակը մասամբ կը բնորոշեն Մէնս. Հավատիսի հետեւեալ խօսքերը, արտասանուած Ընկերութեան մէկ անդամին մահուան առթիւ. «Մուր եւ հեռատես աչք մը թշուառ ազգիս թշուառագոյն վիճակին ակնարկութիւն մ'ըրած ժամանակը, անշուշտ պիտի տեսնայ փոքրիկ միութիւն մը, որ խաւար գիշուան մը ամպապատ քողէն չի ծածկուած աստղի մը պէս բարձրէն փայլելով, քողարկեալ, բայց լուսաւոր երկինքը կը ներկայացնէ: Իրաւամբ այսպիսի ազնիւ միութիւն մը կը համարինք Մուրաւեան եւ Ռաֆայէլեան վարժարաններու աշակերտաց կաճառը, հաւաստի կրթութեան մը խայրիքը: Այս ազնիւ պատանեակները... ունին իրենց ուղեցոյց... Նարոյնին երբորդի այս նշանաւոր պատգամը. Անցեալէն ինչ որ բարի է, պահպանել ու ապագայն պատրաստել...: Յանկալի է ուրեմն այսպիսի միութիւն մը, որ անցեալը ապագային հետ պիտի կապէ, որ է միայն ազգային դժուարութեանց դժուարագոյնը»⁴¹:

Ընկերութիւնը 1862 Մարտ 15ին 7 հոգիէ բաղկացած Յանձնաժողով մը կը կազմէ, որ ունի իր յատուկ կանոնագիրը եւ Ընկերութեան Գործադիր Ժողովն է⁴²: 1864ին Ընկերութեան նախագահն է Սրապիտն Հէքիմեան: Ընկերութիւնը սովորութիւն ըրած ըլլալով իր հիմնադրութեան տարեգարձը ճաշկերոյթով մը տօնախմբելու՝ 1864ի ճաշկերոյթին կը մասնակցին աւելի քան 60 ընկերներ եւ քանի մը պատուոյ անդամներ⁴³. վերջիններու մէջ է Գրիգոր Օտեան: 1868 Փետրուարին, մինչ Ընկերութեան ամէնէն արդիւնաշատ անգամը — Մ. Պէշիկթաշլեան — ծանր

հիւանդութեան մը պատճառաւ անկողնոյ գամուած էր՝ Ընկերութիւնը տարեգարձի ճաշկերոյթը կը սարքէ Palais de Christal ի մէջ, ուր Ընկերութիւնը կ'որոշէ իր ծախքով հրատարակել Պէշիկթաշլեանի գլխաւոր գործերը: Գրեթէ լոյս կը տեսնէ սակայն 1870ին, 582 էջով⁴⁴:

Մկրտիչ Պէշիկթաշլեանի մահէն վերջ (1868 Նոյ. 28) Մուրաւ-Ռաֆայէլեան Ընկերութիւնը հեռզհեռէ ակարանադով՝ 1871ին բոլորովին դադրած է:

7. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ (1860)

1860 Սեպտ. 1ին, Բերայի մէջ «գաւազան կրօնքէ ուք ազգայինք ի դիմաց եռսունքի չափ ընկերաց» կը հիմնեն Բարեգործական Ընկերութիւնը⁴⁵: 1861ին հրատարակած իր մէկ Յայտարարութեամբ Ընկերութիւնը կը յայտնէ այն շարժառիթները, որոնք մղած են հիմնելու այս Ընկերութիւնը: Հոն գլխաւորաբար կը շեշտուի. «Եւրոպիոյ մեքենաշարժ ճարտարութիւնները մեր բնիկ ձեռագործ տրուեստներուն յաջորդեցին: Եւրոպիոյ դրամական առատութիւնն ու երմտական ճարտար կարգադրութիւնները իրենց սեպտականեցին մինչեւ ցարզ մեր բնիկ սեղանաւորաց ըրած շահերը: Եւրոպիոյ լուսաւորեալ երկրագործութիւնը հարածեց ու խափանեց մեր հիւսուող հողագործութիւնը. արդէն իսկ Եւրոպիոյ երկրագործական շատ բերքեր սկսած են գալ մաքառիլ մեր բնիկ բերքերուն հետ աշխարհի էն պարարտ հողին վրայ եւ էն զեղեցիկ կլիմային տակ...: Ո՞րն է արդեօք դարմանը: Ծառ դիւրութեամբ լուծելու խնդիր մըն է ասի: Ի բնէ արհեստաւոր ու երկրագործ ազգ մը՝ իր ձեռքի արուեստն ու երկրագործութիւնը անդխտանալուն համար չկրնար կանգնիլ, բայց միայն նոր քաղաքականութեան պահանջած արուեստներն ու երկրագործութիւնը ձեռք բերելով: Ան ատեն ասա՛ կրնանք հաւասար գորութեամբ մըցիլ մեր հողին վրայ օտարոտի ճարտարութեանց, արուեստներու եւ երկրագործութեան հետ եւ մեր բնիկ երկրացի ըլլալուն շնորհին ի բաց վանել զանոնք...: Ասոր համար ալ ազգին ընկերքը յայտնի կեցած է: Ազգին ազգաւոր

⁴⁴ Անդ՝ 1870, Թ. 1037:
⁴⁵ Յայտարարութիւն Բարեգործական Ընկերութեան Հայոց, Կ. Պ. 1861, էջ 16:

³⁹ Անդ՝:
⁴⁰ Անդ՝ 1861, Թ. 397, 435:
⁴¹ Անդ՝ Թ. 417:
⁴² Անդ՝ 1862, Թ. 444:
⁴³ Մասիս, 1864, Թ. 622:

ու խեղճ մասին գաւազաններն առնել ու պզտիկուց անոնց գաւազան արհեստներ ու մանաւանդ երկրագործութիւն սարվեցնել գիտութեան ընծայած նոր լոյսերուն համեմատ...: Եթէ կարենանք այս արդիւնքը ձեռք բերել, ազգին նիւթական վիճակն ու բարոյական վեճակը միանգամայն բարելաւած կ'ըլլանք»⁴⁶:

Յայտարարութիւնը յետոյ համազգային լուրջ ձեռնարկի մ'անհրաժեշտութիւնը մատնանշելով՝ կը շարունակէ. «Ժամանակնիս սուղ եւ աշխատութիւննիս ծանր է: Ասանկ ժամանակներու մէջ եւ ասանկ դործ մ'ի գլուխ հանելու համար ընդհանուր Ազգին բոլոր նիւթական, մտաւորական ու բարոյական գորութիւնները պէտք է միանան ու ի մի ձուլուին...: Այս նպատակով եւ այս սկզբունքներով հաստատուեցաւ ասա Համազգային Ընկերութիւն մը Բարեգործական Ընկերութիւնը հայոց անունով: Այս Ընկերութեան հաստատութիւնը բարի գործէ մ'ալ աւելի, Ազգային հարկաւորութիւն մըն էր, անհրաժեարելի պէտք մըն էր»⁴⁷:

Ժամանակակից բոլոր թերթերը կը մեղեն Ընկերութիւնը: Մասիս⁴⁸ կը գրէ. «Ուրախ սրախ կը ծանուցանենք որ այս օրերս մեր Հոռոմէական ազգայնոց լուսաւորեալ մասին կողմէն Համազգային Ընկերութիւն մը հաստատելու առաջարկութիւններ կ'ըրած է Լուսաւորչական մասին մէկ քանի պատուաւոր ուսուցիչականացը...: Ընկերութեան նպատակը պիտի ըլլայ երկրագործութեան ու վաճառականութեան դպրոց մը հաստատել եւ գաւառարնակ Հայոց ազգաւոր եւ անտրուինչ տղայքներ այս կենցաղօգուտ ուսմունքներուն մէջ կրթել՝ առանց կրօնի խորութեան: Ահաւասիկ ազնիւ եւ ճշմարիտ ազգութեան ձեռնարկութիւն մը՝ որուն ի բոլոր սրտէ յաջողութիւն կը մաղթենք»:

Ընկերութեան հիմնական Կանոնները⁴⁹ խմբագրած է յատուկ Յանձնաժողով մը, որուն անդամներն էին.

- Սերովբէ Ալիշանեան
- Գրիգոր Աղաթօն
- Մկրտիչ Աղաթօն
- Սերովբէ Թաղաւորեան
- Դոկտ. Յովսէփ Երչմանեան
- Գրիգոր Օտեան⁵⁰:

⁴⁶ Անդ՝ էջ 11—14:
⁴⁷ Յայտարարութիւն, անդ՝ էջ 14—15:
⁴⁸ 1860, Թ. 452:
⁴⁹ Տե՛ս Յայտարարութիւն, անդ՝ էջ 21—24:
⁵⁰ Անդ՝ էջ 17: — Մասիս, 1860, Թ. 456:

Բարեգործական նպատակն է. «Ազգին օրը, անտէր եւ չքաւոր աղայքը երկրագործութեան եւ արուեստից գրողեցնելու միջոցներն ի դործ դնել (Յօդուած Ա.): Ընկերութեան անգամ է ամէն հայ, որ տարեկան բաժին մը կը վճարէ. մէկ բաժինն է 1 օսմ. լիւրա (Յօդ. Բ. եւ Գ.): Ընկերութիւնն ունի Ընդհանուր եւ Տնօրէն Ժողով: Առաջինին կը մասնակցին բոլոր անդամները, իսկ երկրորդը 5 հոգիէ կը բաղկանայ՝ ընտրուած Ընդհանուր Ժողովէն: Ընկերութեան առաջին ատժամանակեայ Ատենապետն կ'ըրած է Գրիգոր Աղաթօն, իսկ Ատենապետը՝ Մ. Պէշիկթաշլեան: Առաջին Տնօրէն Ժողովը կազմուած է հետեւեալներէ.

- Գրիգոր Աղաթօն
- Սերովբէ Թաղաւորեան
- Մկրտիչ Միւսէլիան
- Դոկտ. Յովսէփ Երչմանեան
- Գրիգոր Օտեան:

Բարեգործական Ընկերութեան նշանաբանն կ'ըրած է «Սէր եւ Միութիւն»⁵¹: Յ. Ոսկան Բարեգործականի այս սկզբնական սկզբունքը մասնանշելով կը գրէ. «Վերջապէս իմ սիրելի ազգիս հաստատուող մասերը, յանուն Բարեգործական Ընկերութեան, կը միարանին եւ հայ անուամբ իրար կ'ողջունեն. փարելի՛ սղջոյն, որով այնչափ տարիներէ ի վեր ժառանգական կարծուած առելութիւնը կը փարատի»⁵²: Իսկ Մասիս խմբագրութիւնը կ'աւելցնէ. «Ասանկ ազնիւ խորհրդով եւ ճշմարիտ ազգասիրութեան ուղով հաստատեալ Ընկերութիւն մը որ կրօնական խորութիւնները մէկդի թողլով՝ հայ անունը կրող համազգի եւ համարին կրթայրներ սիրով իրարու հետ կը միարանէ ազգին օգտակար ծառայութիւններ ընելու համար, ասանկ ընկերութիւն մը՝ ըստ մեզ՝ լուսաւորութեան եւ քաղաքակրթութեան ճամբուն մէջ նոր յառաջադիմութեան քայլափոխ մըն է ազգերնու համար. ուստի եւ իր հիմնարկութիւնը ուրախութեամբ ողջունելով՝ անխափան յարատեւութիւնն ու կատարեալ յաջողութիւն կը մաղթենք իրեն»⁵³:

1860ի վերջը Ընկերութիւնը ունէր 340 անդամ 446 բաժինով: Ընկերութիւնը մտա-

⁵¹ Յայտարարութիւն, էջ 27:
⁵² Մասիս, 1860, Թ. 461:
⁵³ Անդ՝ Թ. 456:

զրած էր ունենալ 200.000 զրուշի դրամա-
 գրուխ մը՝ գործի անցնելու համար⁵⁴։ Ան-
 դամավճարներէ, նուիրատուութիւններէ ու
 թատերական հանդէսներէ հաւաքուած դրամ-
 ներու գումարը, արդէն 1862ին բարձրացած
 էր 100.000 զրուշի⁵⁵։ 1864ին տակաւին գործի
 անցած էր Ընկերութիւնը⁵⁶։ Փնջիկ արտնջե-
 լով որ Ընկերութիւնը հաշուետուութիւն
 չ'ընէր հանրութեան առջեւ՝ կ'ըսէ որ «մենք
 զիտենք թէ ան խափանած է»։ Ըստ Արեւ-
 ելքի⁵⁷ Ընկերութիւնը կազմալուծուած է
 Գրիգոր Աղաթօնի մահէն (1868) վերջ։ Թէեւ
 1868—1871 Ընկերութիւնը տակաւին կանդուն
 էր՝ սակայն միշտ կը դանդաղէր գործի
 անցնելու։ Յայտնապէս կը տեսնուի որ Ըն-
 կերութիւնը, սկիզբէն ի վեր, ձեռներէջ վար-
 չական անձերէ զուրկ եղած է։ Իր ունեցած
 դրամադուխէն շատ աւելի նուազով, յաջորդ
 տարիներու ուրիշ հայ Ընկերութիւններ, աչ-
 քառու գործունէութիւն ցոյց տուած են
 կրթական գեանի վրայ, ինչպէս մասամբ տե-
 սանք եւ դեռ պիտի տեսնենք։

1868 Հոկտ. 25ին Բարեգործականի եր-
 կու Գանձապետները — Պետրոս Կիւզէլ եւ
 Գէորգ Զարգարեան — հետեւեալ հաշիւը կը
 ներկայացնեն։ Ընկերութիւնը ունի պատրաստ
 դրամ՝ 1871-01 թրքական լիրա, 18 հատ
 մուրհակ Crédit Foncier 397.71½ լիրա ար-
 ժէքով եւ 24 լիրայի դրամարկղ մը։ Որով
 Ընկերութեան ունեցած դրամարժէքին գու-
 մարն է 2293.72½ թրքական լիրա⁵⁸։

1873ին Պոլսոյ Օրագիր կը հարցնէ թէ
 Ընկերութիւնը մինչեւ ե՞րբ անգործ պիտի
 մնայ⁵⁹։ 1874ին Ընկերութեան դրամադուխը
 բարձրացած էր 4000 թրքական լիրայի, որ կը
 համապատասխանէ մօտ 400.000 զրուշի,
 բայց թերթը⁶⁰ կը բողոքէ որ «դրամը մի-
 միայն աւելցնելու ջանք մը կայ, առանց
 որեւէ բարոյական արգիւնքի»։ Իսկ ատկէ
 վերջ ո՛չ Ընկերութեան անունը կայ ոչ ալ
 բողոքող։ Ու Բարեգործական Ընկերութիւնը
 հրապարակէն կը քաշուի խոշոր դրամադու-
 խով մը՝ առանց որեւէ շօշափելի ազդային
 գործունէութեան։

⁵⁴ Անդ՝ 1861, Թ. 512—513:
⁵⁵ Մասիս, 1862, Թ. 524, 526:
⁵⁶ Սէր, 1864, էջ 46:
⁵⁷ 1898, Թ. 3853:
⁵⁸ Մասիս, 1868, Թ. 872:
⁵⁹ Օրագիր, Թ. 909:
⁶⁰ Անդ՝ 1874, Թ. 1389:

8. ՕԳՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1861)

1861ին Ս. Փրկչի Հիւանդանոցը անտե-
 սական անմխիթար վիճակ մ'ունէր։ Մոմա-
 րանը, որ ամսէ ամիս 6000 զշ. եկամուտ մը
 կ'ապահովէր՝ անգործածելի դարձած էր.
 քանի մը կալուածներ անվարձ մնացած էին.
 Հոգաբարձութիւնը քաշուած էր գործէ։
 Միակ մխիթարական պարագան Տիկնանց
 Խնամակալութեան Ընկերութիւնն էր, որ իր
 այցելութիւններով ու դոնորան նուիրաբաշ-
 խութիւններով բարի սամարացիի գերը կը
 կատարէր⁶¹։

Ահա այսպիսի պարագաներու մէջ է որ
 երեւան կու գայ Օգնական Ընկերութիւնը՝
 Հիւանդանոցի նիւթական կարիքները հոգա-
 լու համար։

Մեղու⁶² կը գրէ որ Ընկերութեան հիմ-
 նումի նախաձեռնող անձը մինչ կը ջանար
 գոյն ու կերպարանք տալ Ընկերութեան՝ ու-
 ըրչներ զինքը կը կանխեն։ Մասիսի համե-
 մատ⁶³ Ընկերութիւնը կազմուող է Գալուստ
 Տէր-Պողոսեան, որ Տնտեսական Խորհուրդի
 անդամ էր։ Վերջինս 1861 Նոյ. 24ին «Օգնա-
 կան Ընկերութեան նախնական պայմանները»
 հրատարակելով Մասիսի մէջ⁶⁴ կ'իմացնէ թէ
 Ընկերութիւնը «առ այժմ մէկ տարուան հա-
 մար պիտի շարունակուի»։ Անգամ գրուողը
 ամսական 10 զշ. պիտի վճարէր։ Ընկերու-
 թեան գրասենեակը՝ Մայր եկեղեցւոյ մօտ՝
 Ազդ. Հիւանդանոցի գրասենեակին էր։ Բե-
 րայի Ընկերութիւններու կարգին կը յիշէ
 զայս Թորգոմեան⁶⁵։

Ընկերութիւնը կը կազմակերպուի եւ
 գործի կ'անցնի 1862 Յունուար 1ին։ Ունի
 12 վերատեսուէ Խորհրդական, 5 Գանձապետ
 եւ ուրիշ 37 պաշտօնեայ, բոլորը նուիրուած
 Հիւանդանոցի հոգատարութեան։ «Ձայն
 Քրիստոսի եւ հրաւէր առ Ազգայինս» խորա-
 գրով ջերմ հրաւէր մը կ'ուղղէ ժողովուրդին՝
 զիմելով անոր բարի սրտին։ Կը հրատարակէ
 իր 15 Կանոնները⁶⁶։

«Պաւարեալ»ի եւ «Լուսաւորեալ»ի շրջանն
 էր սակայն ասիկա։ Սահմանադրական եւ
 հակասահմանադրական վէճերու աղմուկին
 մէջ կը ստիպուի Ընկերութիւնը ժամանակէն

⁶¹ Մասիս, 1861, Թ. 512:
⁶² Կ. Պ. 1862, էջ 9—10:
⁶³ Անդ՝ Թ. 512:
⁶⁴ Անդ:
⁶⁵ Երեմիա Չէլէպիի Քէօմիւրճեան, Բ., էջ 590:
⁶⁶ Մասիս, Թ. 517: — Բ. Քէլէեան, Պատմ. Հիւ.
 անդ՝ էջ 160—162:

առաջ քաշուել ասպարէզէն, այն է՝ արդէն
 1862 Ապրիլ 15ին⁶⁷։ Բայց Ընկերութեան 27
 անդամները մինչեւ 1863 Յունուար կը շա-
 րունակեն Հիւանդանոցի մատակարարութեան
 գործը⁶⁸։

Մասիս⁶⁹ գովեստով կը խօսի Ընկերու-
 թեան գործին վրայ եւ կու տայ անոր 13 ամ-
 սուան հաշուեցոյցը։

9. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1861)

Մասիս⁷⁰ կը յիշէ Ընկերութիւնն իր խկա-
 կան անունով. «Արեւելեան թատրոնի Ընկե-
 րութիւն», բայց յաճախ կոչուած է պարզա-
 պէս «Արեւելեան Ընկերութիւն»։ Յիշեալ
 թերթը Ընկերութեան մասին առաջին ծա-
 նուցումը 1861 Դեկտ. 13ին ընելով՝ կը գրէ.
 «Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ հա-
 յազդի ուսումնական երիտասարդներէ կազ-
 մուած թատերական Ընկերութիւն մը Պէյօղ-
 լուի Քաֆէ Օրթանթալ ըստած քաղկեօն
 թատրոնի փոխելով՝ վաղը Դեկտ. 14 հինգ-
 շաբթի օրէն սկսեալ շարաթը երեք գիշեր
 եւրոպական ընտիր թատերախաղեր պիտի
 ներկայացնէ հայերէն լեզուաւ։ Վաղը իրի-
 կուան ներկայացուելիք թատերախաղերն են՝
 «Երկու յիւնապետք» թատերգութիւն (տոստ)
 երեք արարուածով, եւ «Անձանթի» անուն
 զուէշտը (Փարսա)։ Թատրոնին տնօրէնն է
 արդոյ Պ. Ռուբէն Կարապետեան եւ երաժշտու-
 թեան առաջնորդն է Պ. Յօսքինի խաղացի
 վարպետը⁷¹։

Ընկերութեան հիմնուի ճշգրիտ թուա-
 կանը չենք կրցած ստուգել։ Որքան կ'երե-
 ւայ՝ ժամանակակից թերթերը չեն աւանդած
 զայն։ Այն ստոյգ է որ Արեւելեան թատրոնի
 խումբը կազմուած է Օրթապիւղի եւ Խաս-
 զիւղի թատերական խումբերու միացումով,
 որ տեղի ունեցած է 1860 Փետր. 26ին՝ Խաս-
 զիւղի խումբին Բերա Նաումի թատրոնին մէջ
 տուած ներկայացումէն «քիչ ետքը⁷²»։ Հա-
 ւանական կը թուի 1861ի ամառը կամ աշնան
 տեղի ունեցած Ընկերութեան կազմութիւնը։

Ա. Ալոյսյանեան կը յիշէ Ընկերութեան
 կազմութեան նախաձեռնողները. Առաքել Ալ-

⁶⁷ Մասիս, Թ. 531: — Մեղու, էջ 62: — Մեմ.
 Հալ. 1863, Թ. 491:
⁶⁸ Պատմ. Հիւ., անդ՝ էջ 165:
⁶⁹ Թ. 577:
⁷⁰ Թ. 516:
⁷¹ Մասիս, Թ. 514:
⁷² Արեւիկ, 1898, Թ. 3791:

թուն Տիւրքի Եղբարք, Յարութիւն Մերէմ-
 գուլի, Աղեքսանդր Մերէմգուլի, Գրիգոր
 Խուրտաճեան եւ Գր. Յրէնկեան⁷³։

Առաջին անդամներէն մին եղած է նաեւ
 Պ. Նորատուեկեան, որ 1861 Դեկտ. ի սկիզբը
 կը հրաժարի անդամակցութենէ⁷⁴։

Արեւելեան թատրոնի Ընկերութիւնը լու-
 ծուած է 1863 Ապրիլին⁷⁵, բայց կը մնայ թա-
 տերախումբը, բաժնուելով մասերու։ Ասոնց-
 մէջ մէկ մասը կը կազմէ «Հայ Երասանական
 Ընկերութիւն»ը։

(Շարունակելի:) Է. ԵՓՐԵՄ ՊՈՂՈՍԵԱՆ

ՄԵՀՈՒՆ ԿՈՒՆՉՔԸ ՀԵՅՈՎԻՏԵԿԱՆ ԸՍՊԵՐԷՅԻ ՎՐԵՑ

Տ. ԱՐՏԵՐԸՂԻ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍ ՍԻՐՄԷՆԵՆ

27 սեպտեմբեր 1951 վախճանեցաւ ի Պա-
 րիս Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւրմէեան,
 62 տարեկան հասակին։

Հանդուցեալը ծնած է 1889ին Ակն հայա-
 շատ քաղաքը։ Իր ուսումը առած է Կ. Պոլիս
 Արամեան եւ Կենդրոնական վարժարաններու
 մէջ (1897—1907)։ Դեռ նոր ըջանաւարտ կը
 հրաւիրուի նոյն քաղաքի Կարապետեան Վար-
 ժարանի ուսուցիչ (1901)։ յաջորդ տարին կը
 փոխադրուի Էսկի Շէօր, ստանձնելու Ազ-
 գային վարժարանի տեսչութիւնը։

Ի տես հայ ժողովուրդին աղէտին 1918ին
 կ'ընտրէ եկեղեցական վիճակը նուիրուելու
 հայ գաղթականներու հովուութեան. Գալէմ-
 քարեան Սրբազանէն կ'ընդունի քահանայա-
 կան ձեռնադրութիւնը եւ կը մեկնի Գոնիա։
 Գեմալեան կառավարութենէն կ'աքորուի
 Կարին. 1922ին կը վերադառնայ Կ. Պոլիս,
 որ կը գործէ որպէս ուսուցիչ եւ քարոզիչ։
 1924ին կը յանձնուի իրեն Հայկազնի թեմին
 առաջնորդութիւնը։ 1929ին կ'օծուի եպիսկո-
 պոս եւ 1932ին կ'անուանուի արքեպիսկոպոս։
 1940ին կը կարգուի առաջնորդ Փրանսայի,
 Բելգիայի եւ Չեխոսլովակիայի Հայոց. բայց պա-
 տերազմի պատճառաւ չկարենալով անցնել
 Պարիս, կը մնայ Պէյրութ եւ կը վարէ նոյն
 թեմին առաջնորդութիւնը։ 1945ին կը մաս-

⁷³ Գաղութ. Տարեգ., Բ., էջ 82:
⁷⁴ Մասիս, անդ՝ Թ. 516:
⁷⁵ Ընդարձակ Տարեգ., 1927, էջ 170: